Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 582 - Ա
որոշման

«ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Էներգախնայողությունը ապահովելու նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տանիքին այլընտրանքային արևային ֆոտովոլտային կայանի տեղադրում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	3,876,600 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն (Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք, Ա. Մանուկյան փողոց, 25 շենք, 4201, ՀՎՀՀ՝ 07806692)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի սեպտեմբերի 9-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 8-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տանիքին 18,7 կՎտ դրվածքային հզորությամբ այլընտրանքային արևային ֆոտովոլ-տային կայանի տեղադրում: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի սեպտեմբերի 9-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 8-ն ընկած ժամանա-կահատվածում՝ 3,876,600 դրամ չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Բժշկական կենտրոնի տանիքի ամրակցման, ֆոտովոլտային կայանի ոտնակների և կայանի տեղադրման, էլեկտրամալուխների անցկացման և կայաններին միացման աշխատանքների իրականացում՝ 3,876,600 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդի համայնքա-պետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

20.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ